Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

**5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին**

(Ա.Քալանթարյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

**6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

(Ա.Քալանթարյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՔՁԲԿ-16/3-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ, հասցե՝ ք. Երևան, Ներսիսյան 7 տնօրենի ընդունարան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա.Քալանթարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Գ.Նազարյան |
| | Մ.Մկրտչյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Հ.Հակոբյան |